ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՀՐԱՎԵՐԻ ՊԱՐԶԱԲԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի 2024 թվականի օգոստոսի 22-ի թիվ 5 որոշմամբ և հրապարակվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն

ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԾԱԾԿԱԳԻՐԸ «ՇՄՆԷՊԾ-ԷԱՃԱՊՁԲ-24/07»

Շրջակա միջավայրի նախարարության էկոպարեկային ծառայության կարիքների համար «Հատուկ նշանակության մեքենաների» ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՇՄՆԷՊԾ-ԷԱՃԱՊՁԲ-24/07» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է նույն ծածկագրով հրավերի վերաբերյալ 2024 թվականի օգոստոսի 21-ին ժամը 14:54-ին ստացված հարցադրումները և դրանց վերաբերյալ 2024 թվականի օգոստոսի 22-ին տրամադրված պարզաբանումները՝

Հարցադրում N 1: Սույն էլեկտրոնային աճուրդի շրջանակներում և՛ Լոտ 1-ի և՛ Լոտ 2-ի համապատասխան տեխնիկական բնութագրերում «պարտադիր պայման» աղյուսակում որպես մատակարարման ժամկետ նշվում է՝ «համաձայնագիրը կնքելուց հետո 4 ամսվա ընթացքում, բայց ոչ ուշ քան 2024թ. դեկտեմբերի 25-ը»: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ բացակայում է հստակ ժամկետ, թե երբ է համաձայնագիրը կնքվելու, և արդեն իսկ հնարավոր չի լինելու կատարել «բայց ոչ ուշ քան 2024թ. դեկտեմբերի 25-ը» պահանջը, արդյո՞ք Պատվիրատուի համար ընդունելի կլինի, եթե մեքենաները մատակարարվեն համաձայնագիրը կնքելուց հետո 4 ամսվա ընթացքում, սակայն 2024թ.-ի դեկտեմբերի 25-ից ուշ: Այսինքն՝ մրցույթում նշված մատակարարման ժամկետը պետք է հասկանալ հետևյալ կերպ՝ համաձայնագիրը կնքելուց հետո 4 ամսվա ընթացքում:

Պարզաբանում N 1: Այո, մատակարարումը պետք է իրականացվի համաձայնագիրը կնքելուց հետո 4 ամսվա ընթացքում:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել «ՇՄՆԷՊԾ-ԷԱՃԱՊՁԲ-24/07» ծածկագրով գնահատող հանձնաժողովի քարտուղար՝ Ս. Ղազարյանին:

Հեռախոս՝ (010) 650124:
Էլեկտրոնային փոստ՝ s.ghazaryan@ecopatrolservice.am
« ՇՄՆԷՊԾ-ԷԱՃԱՊՁԲ-24/07» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողով: